

## Կ Ո Ն Վ Ե Ն Ց Ի Ա

### Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Շվեյցարիայի Դաշնային խորհուրդը,

ցանկանալով զարգացնել և ամրապնդել երկու Պետությունների միջև տնտեսական, գիտական և տեխնիկական հարաբերությունները և այս նպատակով կնքել եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին Կոնվենցիա,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

#### Հոդված 1

#### Ընդգրկված անձինք

Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

#### Հոդված 2

#### Ընդգրկված հարկեր

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային միավորների կամ տեղական իշխանության մարմինների կողմից սահմանված եկամուտների և գույքի հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց զանձման եղանակից:

2. Եկամուտների և գույքի հարկեր են համարվում ամբողջ եկամտի, ամբողջ գույքի կամ եկամտի կամ գույքի առանձին տարրերի նկատմամբ սահմանված բոլոր հարկերը, ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած եկամտի հավելածի, ձեռնարկությունների կողմից վճարված աշխատավարձի ընդհանուր գումարի, ինչպես նաև գույքի արժեքի բարձրացման նկատմամբ հարկերը:

3. Կոնվենցիան կիրառվում է, մասնավորապես, գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ.

ա) Հայաստանում՝

- i) շահութահարկ,
- ii) եկամտահարկ,
- iii) գույքահարկ,
- iv) հողի հարկ,

(այսուհետ՝ հայկական հարկ):

բ) Շվեյցարիայում՝

դաշնային, կանտոնային և համայնքային հարկեր՝

i) եկամտի նկատմամբ (ընդհանուր եկամուտ, աշխատանքային եկամուտ, եկամուտ գույքից, արդյունաբերական և առևտրային շահույթ, գույքի արժեքի հավելած և եկամտի այլ տարրեր), և

ii) գույքի նկատմամբ (ընդհանուր գույք, շարժական և անշարժ գույք, ձեռնարկատիրական ակտիվներ, վճարված կապիտալ ու ռեզերվներ և գույքի այլ տարրեր),

(այսուհետ՝ շվեյցարական հարկ):

4. Կոնվենցիան կիրառվում է նաև նույնական կամ ըստ էության համանման ցանկացած հարկի նկատմամբ, որը կսահմանվի Կոնվենցիայի ստորագրումից հետո՝ ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները միմյանց կժամուցեն իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված որևէ նշանակալի փոփոխության մասին:

### **Հոդված 3 Ընդհանուր սահմանումներ**

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե համատեքստը այլ բան չի պահանջում.

ա) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները, համատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Շվեյցարիա,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն,

գ) «Շվեյցարիա» տերմինը նշանակում է Շվեյցարիայի Համադաշնություն,

դ) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

ե) «անձ» տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,

զ) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած միավորում, որը հարկման նպատակներով դիտվում է որպես իրավաբանական անձ,

է) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող նավով, օդանավով կամ ճանապարհային տրանսպորտով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նավը, օդանավը կամ ճանապարհային տրանսպորտը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև,

ը) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

i) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար կամ նրա լիազոր ներկայացուցիչ, Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետ կամ նրա լիազոր ներկայացուցիչ,

ii) Շվեյցարիայի դեպքում՝ դաշնային հարկային ադմինիստրացիայի տնօրեն կամ նրա լիազոր ներկայացուցիչ,

թ) «ազգային անձ» տերմինը նշանակում է.

i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն, ասոցիացիա կամ ցանկացած այլ միավորում, որը Պայմանավորվող պետությունում գործող օրենսդրության հիման վրա ստացել է իր այդ կարգավիճակը:

2. Պայմանավորվող պետության կողմից Կոնվենցիան ցանկացած պահի կիրառվելիս դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե համատեքստը այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որը նրան այդ պահին այդ Պետության օրենսդրությամբ տրված է այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան: Այդ Պետության գործող հարկային օրենքներով սահմանված ցանկացած տերմինի նշանակությունը գերակայում է այդ Պետության այլ օրենքներով այդ տերմինի համար սահմանված նշանակության նկատմամբ:

## **Հոդված 4 Ռեզիդենտ**

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որը, այդ Պետության օրենսդրության համաձայն, այնտեղ ենթակա է հարկման իր մշտական բնակության, ռեզիդենտության, ստեղծման վայրի, ղեկավարման վայրի կամ որևէ այլ համանման բնույթի չափանիշի հիման վրա, և ներառում է նաև այդ Պետությունը և ցանկացած վարչատարածքային միավոր և տեղական իշխանության մարմին:

2. Երբ 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպով.

ա) նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ ունի մշտական կացարան. իսկ եթե նա երկու Պետություններում էլ ունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերն առավել սերտ են (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից և ոչ մեկում չունի մշտական կացարան, նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պետություններում էլ կամ նրանցից և ոչ մեկում չի բնակվում, համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որի ազգային անձն է հանդիսանում,

դ) եթե նա երկու Պետությունների ազգային անձն է կամ և ոչ մեկինը չէ, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Երբ 1-ին կետի դրույթներին համապատասխան անձը (ոչ ֆիզիկական անձը) հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

## **Հոդված 5 Մշտական հաստատություն**

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը հատկապես ներառում է.

ա) ղեկավարման վայր,

բ) մասնաճյուղ,

գ) գրասենյակ,

դ) գործարան,

ե) արտադրամաս,

զ) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների արդյունահանման ցանկացած այլ վայր, և

է) ապրանքային պահեստ՝ կապված այն անձի հետ, որը ստեղծում է պահպանման պայմաններ մյուսների համար:

3. Շինարարական հրապարակը, կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիրը կամ դրանց հետ կապված վերահսկման գործունեությունը համարվում են

մշտական հաստատություն միայն այն դեպքում, երբ նման հրապարակի, ծրագրի կամ գործունեության տևողությունը գերազանցում է վեց ամիսը:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ կետերի դրույթներին՝ կհամարվի, որ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում.

ա) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ մատակարարման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ մատակարարման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով,

դ) գործունեության կայուն վայրի օգտագործումը բացառապես ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության կայուն վայրի պահպանումը ձեռնարկության համար բացառապես գովազդի, տեղեկատվության տրամադրման, գիտական կամ նախա-պատրաստական կամ օժանդակ բնույթի նմանատիպ այլ գործողությունների նպատակով,

զ) մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից իրականացվող տեղակայման կամ հավաքման ծրագիրը՝ կապված այդ ձեռնարկության կողմից արտադրվող մեխանիզմների կամ սարքավորումների առաքման հետ,

է) գործունեության կայուն վայրի օգտագործումը բացառապես «ա» - «զ» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար, պայմանով, որ այդ համակցության արդյունքում գործունեության կայուն վայրի ամբողջական գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթի է:

5. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ այն դեպքում, երբ անկախ կարգավիճակով գործակալ համարվող անձից, որին վերաբերում է 6-րդ կետը, տարբերվող անձը գործում է ձեռնարկության անունից և ունի ու սովորաբար իրականացնում է Պայմանավորվող պետությունում այդ ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասությունը, ապա այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող այդ Պետությունում ցանկացած գործունեության առնչությամբ, որն այդ անձն իրականացնում է այդ ձեռնարկության համար, եթե այդ անձի գործունեությունը չի սահմանափակվում 4-րդ կետում նշվածով, որը եթե անգամ իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, այդ կետի դրույթների համաձայն՝ այդ գործունեության կայուն վայրը չի վերածում մշտական հաստատության:

6. Պայմանավորվող պետության ձեռնարկությունը չի համարվի մշտական հաստատություն ունեցող մյուս Պայմանավորվող պետությունում միայն այն պատճառով, որ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ Պետությունում բրոքերի, սովորական կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում: Մակայն, եթե այդպիսի գործակալի գործունեությունը ամբողջությամբ կամ գրեթե ամբողջությամբ իրականացվում է այդ ձեռնարկության անունից, ապա, սույն կետի իմաստով, նա չի դիտվի որպես անկախ կարգավիճակով գործակալ:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին որևէ ընկերության չի դարձնում մյուս ընկերության մշտական հաստատությունը:

## **Հոդված 6** **Եկամուտ անշարժ գույքից**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացված եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացված եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Այդ տերմինը ամեն դեպքում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող կենդանիներն ու սարքավորումները, այն իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի ուզուֆրուկտը և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման համար փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Նավերը, օդանավերը և ճանապարհային տրանսպորտը որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տրամադրելուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ և անկախ անհատական ծառայություններ մատուցելու համար օգտագործված անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

## **Հոդված 7** **Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից**

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե այդ ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով այնտեղ չի իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն: Եթե ձեռնարկությունը վերը նշված ձևով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, ապա ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով 3-րդ կետի դրույթները, երբ Պայմանավորվող պետության ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով այնտեղ իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում այդ մշտական հաստատությանը վերագրվում է այն շահույթը, որը նա կարող էր ստանալ՝ նույն կամ համանման պայմաններում իրականացնելով նույն կամ համանման գործունեություն՝

լինելով ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և գործելով միանգամայն անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցում համարել մշտական հաստատության նպատակների համար կրած ծախսերը, ներառյալ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ նրանից՝ այդ ծախսերը կատարվել են այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե այլ վայրերում:

4. Եթե Պայմանավորվող պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության ամբողջ շահույթը նրա տարբեր ստորաբաժանումների միջև համամասնական բաշխման հիման վրա, 2-րդ կետը ոչ մի կերպ չի արգելի այդ Պայմանավորվող պետությանը հաշվառել հարկման ենթակա շահույթը ընդունված բաշխման եղանակի միջոցով: Այնուամենայնիվ, ընդունված բաշխման եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում ընդգրկված սկզբունքներին:

5. Ոչ մի շահույթ չի վերագրվի մշտական հաստատությանը այդ մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքներ կամ արտադրանք գնվելու պատճառով:

6. Նախորդ կետերի նպատակներով մշտական հաստատությանը վերագրվող շահույթը միևնույն եղանակով որոշվում է ամեն տարվա համար, եթե հակառակն անելու համար չկա հիմնավոր և բավարար պատճառ:

7. Երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնց մասին առանձին նշվում է սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

## **Հոդված 8**

### **Միջազգային փոխադրում**

1. Միջազգային փոխադրումներում նավերի, օդանավերի կամ ճանապարհային տրանսպորտի շահագործումից Պայմանավորվող պետության ձեռնարկության ստացած շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային շահագործող գործակալությունում մասնակցությունից առաջացած շահույթի նկատմամբ:

## **Հոդված 9**

### **Ասոցիացված ձեռնարկություններ**

1. Երբ.

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության ղեկավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության ղեկավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծված կամ սահմանված են պայմաններ, որոնք տարբերվում են նրանցից, որոնք կստեղծվեին անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կհաշվեգրվեր ձեռնարկություններից մեկին, բայց այդ պայմանների պատճառով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:

2. Երբ շահույթը, որի առնչությամբ Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ Պետությունում, նույնպես ներառված է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթի մեջ և հարկվում է համապատասխանաբար, և այդպիսով ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլինեք մյուս Պետության այդ ձեռնարկությանը, եթե ձեռնարկությունների միջև առկա պայմանները լինեին այնպիսի պայմաններ, որոնք կլինեին անկախ ձեռնարկությունների միջև, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են միասին խորհրդակցել երկու Պայմանավորվող պետություններում շահույթի ճշգրտման հարցում համաձայնության հասնելու համար:

3. 1-ին կետում նշված հանգամանքների դեպքում Պայմանավորվող պետությունը չի փոխի ձեռնարկության շահույթը իր ազգային օրենքներում սահմանված ժամկետային սահմանափակումների լրանալուց հետո, և ամեն դեպքում այն տարվա ավարտից հինգ տարի հետո, երբ այդ Պետության ձեռնարկությանը հասանելիք չափաբաժնի ենթակա կլինի նման փոփոխման: Սույն կետը չի կիրառվի խաբեության կամ պարտավորությունների դիտավորյալ չկատարման դեպքում:

## **Հոդված 10** **Շահաբաժիններ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում շահաբաժինները վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենքներին համաձայն. բայց եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի.

ա) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե փաստացի սեփականատեր հանդիսանում է ընկերությունը (ընկերակցությունից տարբեր), որը ուղղակիորեն տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալի առնվազն 25 տոկոսը, և օտարերկրյա ներդրված կապիտալը շահաբաժինների ստացման պահին գերազանցում են երկու հարյուր հազար (200,000) շվեյցարական ֆրանկը կամ դրան համարժեք որևէ այլ տարադրամը,

բ) շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը՝ մնացած բոլոր դեպքերում:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այդ սահմանափակումների կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

Սույն կետը չի ազդում ընկերության հարկմանը այն շահույթի նկատմամբ, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն Կոնվենցիայում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից կամ այլ, պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ կորպորատիվ իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպես բաժնետոմսերից առաջացած եկամուտը՝ համաձայն այն Պետության օրենսդրության, որի ռեզիդենտ է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս

Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և մասնակցությունը, որի համար վճարվում են շահաբաժինները, իրականում կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14-րդ հոդվածի (Անկախ անհատական ծառայություններ) դրույթները:

5. Երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը եկամուտ կամ շահույթ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունում, այդ մյուս Պետությունը ընկերության կողմից վճարված շահաբաժինները չի կարող ենթարկել որևէ հարկման՝ բացառությամբ, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրականում կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ, և չի կարող հարկման ենթարկել ընկերության չբաշխված շահույթը համապատասխան հարկատեսակով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

## **Հոդված 11** **Տոկոսներ**

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են՝ այդ Պետության օրենքներին համաձայն. բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

3. Անկախ 2-րդ կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, որը հանդիսանում է դրանց փաստացի սեփականատերը, վճարվող տոկոսները ենթակա են հարկման միայն այդ մյուս Պետությունում այն չափով, որով այդպիսի տոկոսները վճարվում են.

ա) կապված որևէ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորման ապառիկ վաճառքի հետ,

բ) բանկի կողմից տրամադրված ցանկացած տեսակի փոխառության դիմաց:

4. «Տոկոսներ» տերմինը սույն Կոնվենցիայում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջից, անկախ հիպոթեքային ապահովումից և անկախ պարտապահի շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից, և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից՝ ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի կամ փոխառության տոմսերի հետ կապված պարզավճարներն ու մրցանակները: Սույն Կոնվենցիայի նպատակով ժամկետանց վճարման պատճառով կիրառվող տույժերը որպես տոկոսներ չեն դիտվում:

5. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և պարտապահանջը, որի առնչությամբ վճարվում են տոկոսները, գործնականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14-րդ հոդվածի (Անկախ անհատական ծառայություններ) դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդ տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդ տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

7. Երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքների համաձայն՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

## **Հոդված 12** **Ռոյալթի**

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է՝ այդ Պետության օրենքներին համաձայն. սակայն եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա նման ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի համախառն գումարի 5 տոկոսը:

3. «Ռոյալթի» տերմինը սույն Կոնվենցիայում օգտագործվելիս նշանակում է՝ փոխհատուցման ձևով ստացած ցանկացած տեսակի վճարում գրական, արվեստի կամ գիտական աշխատանքների հեղինակային իրավունքի, ներառյալ՝ կինոնկարների կամ ռադիո- կամ հեռուստատեսային հեռարձակման համար օգտագործվող ֆիլմերի կամ ձայներիզների, ցանկացած պատենտի, սպրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որի առնչությամբ վճարվում է ռոյալթին, գործնականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14-րդ հոդվածի (Անկախ անհատական ծառայություններ) դրույթները:

5. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն երբ ռոյալթի վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որի առնչությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթիի վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդպիսի ռոյալթին համարվում է առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

6. Երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը ենթակա է հարկման յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներից համաձայն՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

### **Հոդված 13** **Գույքի արժեքի հավելված**

1. 6-րդ հոդվածում (Եկամուտ անշարժ գույքից) նշված և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելվածը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մասը կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անհատական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող պետության ռեզիդենտի ունեցած հաստատուն բազային վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելվածը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի հաստատուն բազայի օտարումից առաջացած արժեքի հավելվածը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի, օդանավերի կամ ճանապարհային տրանսպորտի կամ այդպիսի նավերի, օդանավերի կամ ճանապարհային տրանսպորտի շահագործմանը վերաբերող շարժական գույքի

օտարումից Պայմանավորվող պետության ձեռնարկության ստացած արժեքի հավելվածը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

4. Ընկերության, որի ակտիվները ուղղակիորեն կամ անուղղակիորեն բաղկացած են գլխավորապես Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կանոնադրական կապիտալի բաժնետոմսերի օտարումից առաջացած գույքի արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ Պետությունում:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում հիշատակված գույքից տարբերվող ցանկացած գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում օտարող անձը:

#### **Հոդված 14**

##### **Անկախ անհատական ծառայություններ**

1. Մասնագիտական ծառայություններից կամ անկախ բնույթի այլ գործունեությունից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե նա մյուս Պայմանավորվող պետությունում իր գործունեությունն իրականացնելու համար մշտապես իր տրամադրության տակ չունի հաստատուն բազա: Եթե նա ունի այդպիսի հաստատուն բազա, եկամուտը կարող է հարկվել մյուս Պետությունում, սակայն միայն այն չափով, որը վերագրելի է այդ հաստատուն բազային:

2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է հատկապես անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ մանկավարժական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարագետների, ճարտարապետների, ատամնաբույժների և հաշվապահների անկախ գործունեությունը:

#### **Հոդված 15**

##### **Կախյալ անհատական ծառայություններ**

1. Հաշվի առնելով 16-րդ (Տնօրենների հոնորարներ), 18-րդ (Կենսաթոշակներ) և 19-րդ (Պետական ծառայություն) հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այդ կերպով, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե.

ա) ստացողը ֆինանսական տարվա ընթացքում մյուս Պետությունում գտնվում է ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում մյուս Պետությունում գործատուի ունեցած մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավի, օդանավի կամ ճանապարհային տրանսպորտի վրա իրականացվող վարձու

աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ Պետությունում:

### **Հոդված 16 Տնօրենների հոնորարներ**

Որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի անդամ՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

### **Հոդված 17 Արտիստներ և մարզիկներ**

1. Չնայած 14-րդ (Անկախ անհատական ծառայություններ) և 15-րդ (Կախյալ անհատական ծառայություններ) հոդվածների դրույթներին՝ այն եկամուտը, որը Պայմանավորվող պետության ռեզիդենտը ստացել է որպես արվեստի գործիչ՝ թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստ կամ երաժիշտ, կամ որպես մարզիկ մյուս Պայմանավորվող պետությունում իրականացրած իր անհատական գործունեությունից, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Երբ արվեստի գործչի կամ մարզիկի, որպես այդպիսին, իրականացրած անհատական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած 7-րդ (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից), 14-րդ (Անկախ անհատական ծառայություններ) և 15-րդ (Կախյալ անհատական ծառայություններ) հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը: Սույն կետը չի կիրառվի, եթե պարզվի, որ ոչ արվեստի գործիչն ինքը կամ մարզիկն ինքը, ոչ էլ նրանց հետ կապված անձինք ուղղակիորեն չեն մասնակցում այդպիսի անձի շահույթում:

3. 1-ին և 2-րդ կետերը չեն կիրառվում արվեստի գործիչների կամ մարզիկների կողմից իրականացվող գործունեությունից ստացված եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտը ստացվում է ուղղակիորեն կամ անուղղակիորեն կայուն եղանակով մյուս Պայմանավորվող պետության, վարչատարածքային միավորի կամ տեղական իշխանության մարմնի պետական միջոցներից:

### **Հոդված 18 Կենսաթոշակներ**

Հաշվի առնելով 19-րդ (Պետական ծառայություն) հոդվածի 2-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին անցյալում վարձու աշխատանքի առնչությամբ վճարված կենսաթոշակները և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

### **Հոդված 19 Պետական ծառայություն**

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային միավորի կամ տեղական իշխանության մարմնի կողմից ֆիզիկական անձին այդ Պետությանը կամ միավորին կամ տեղական իշխանության մարմնին մատուցած

ծառայությունների դիմաց վճարված՝ կենսաթոշակից տարբերվող աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում, և այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը:

i) հանդիսանում է այդ Պետության ազգային անձ, կամ

ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Պայմանավորվող պետության կամ վարչատարածքային միավորի կամ տեղական իշխանության մարմնի կողմից կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից ֆիզիկական անձին՝ այդ Պետությանը կամ միավորին կամ տեղական իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց վճարած որևէ կենսաթոշակ կարող է հարկվել միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտն ու ազգային անձը:

3. 15-րդ (Կախյալ անհատական ծառայություններ), 16-րդ (Տնօրենների հոնորարներ) և 18-րդ (Կենսաթոշակներ) հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության կամ վարչատարածքային միավորման կամ տեղական իշխանության մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց աշխատավարձի, ռոճիկի և համանման այլ վարձատրությունների և կենսաթոշակների նկատմամբ:

## **Հոդված 20 Ուսանողներ**

1. Ուսանողը կամ սկսնակը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և որը գտնվում է առաջինը հիշատակված Պետությունում բացառապես իր ուսման կամ վերապատրաստվելու նպատակով, այդ Պետությունում չի հարկվում իր ապրելու, ուսանելու կամ վերապատրաստվելու համար ստացած վճարումների մասով, եթե այդպիսի վճարումները առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. 1-ին կետում չներառված դրամաշնորհների, կրթաթոշակների և վարձու աշխատանքից ստացված վարձատրության կապակցությամբ 1-ին կետում հիշատակված ուսանողը կամ սկսնակը, բացի դրանից, այդպիսի ուսման կամ վերապատրաստման ընթացքում իրավունք ունի հավակնելու նույնպիսի հարկային ազատումների, զեղչերի կամ նվազեցումների, ինչպիսիք տրամադրվում են նրա այցելած Պետության ռեզիդենտներին:

## **Հոդված 21 Այլ եկամուտ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չքննարկված եկամտի տարրերը, անկախ առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում: Սույն դրույթը չպետք է կիրառվի վիճակահաղերից ստացված շահումների նկատմամբ:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի (Եկամուտ անշարժ գույքից) 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որի առնչությամբ վճարվել է եկամուտը, գործնականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14-րդ հոդվածի (Անկախ անհատական ծառայություններ) դրույթները:

## **Հոդված 22**

### **Գույք**

1. 6-րդ հոդվածում (Եկամուտ անշարժ գույքից) նշված անշարժ գույքի տեսքով ներկայացված՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անհատական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող պետության ռեզիդենտի հաստատուն բազային վերաբերող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին պատկանող նավերով, օդանավով կամ ճանապարհային տրանսպորտով և այդպիսի նավերի, օդանավի կամ ճանապարհային տրանսպորտի շահագործմանը վերաբերող շարժական գույքով ներկայացված գույքը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի բոլոր այլ տարրերը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

## **Հոդված 23**

### **Կրկնակի հարկման բացառումը**

1. Հայաստանի դեպքում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպով.

ա) երբ Հայաստանի ռեզիդենտը ստանում է եկամուտներ կամ տնօրինում է գույք, որոնք, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել Շվեյցարիայում, ապա Հայաստանը թույլատրում է.

i) այդ ռեզիդենտի եկամտի հարկի նվազեցում Շվեյցարիայում վճարված եկամտի հարկին հավասար գումարի չափով,

ii) այդ ռեզիդենտի գույքի հարկի նվազեցում Շվեյցարիայում վճարված գույքի հարկին հավասար գումարի չափով:

Սակայն երկու դեպքում էլ այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման իրականացումը հաշվարկված եկամտի հարկի կամ գույքի հարկի այն մասը, որը, հանգամանքներից կախված, վերագրվում է եկամտին կամ գույքին, որոնք կարող են հարկվել Շվեյցարիայում:

բ) Երբ, սույն Կոնվենցիայի որևէ դրույթին համապատասխան, Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը Հայաստանում ազատված է

հարկումից, ապա Հայաստանը, այնուամենայնիվ, կարող է այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի համար հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել ազատված եկամուտը կամ գույքը:

2. Շվեյցարիայի դեպքում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպով.

ա) Եթե Շվեյցարիայի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել Հայաստանում, ապա Շվեյցարիան, հետևելով «բ» ենթակետի դրույթներին, այդ եկամուտն կամ գույքը ազատում է հարկումից, սակայն այդ ռեզիդենտի մնացած եկամտի կամ գույքի նկատմամբ հարկի հաշվարկման դեպքում կարող է կիրառել հարկի այն չափը, որը կարող էր կիրառվել, եթե ազատված եկամուտը կամ գույքը ազատված չլիներին հարկումից: Այնուամենայնիվ, այդպիսի ազատումը կարող է կիրառվել 13-րդ հոդվածի (Գույքի արժեքի հավելած) 4-րդ կետում հիշատակված հավելածի նկատմամբ, եթե միայն Հայաստանում այդպիսի հավելածի փաստացի հարկումը ապացուցված է:

բ) Երբ Շվեյցարիայի ռեզիդենտը շահաբաժիններ, տոկոսներ կամ ռոյալթի է ստանում, որոնք, 10-րդ (Շահաբաժիններ), 11-րդ (Տոկոսներ) կամ 12-րդ (Ռոյալթի) հոդվածների դրույթներին համապատասխան, կարող են հարկվել Հայաստանում, ապա Շվեյցարիան այդպիսի ռեզիդենտին խնդրանքի դեպքում թույլատրում է ազատում: Ազատումը կարող է ընդգրկել.

i) Հայաստանում գանձվող հարկի գումարի չափով տվյալ ռեզիդենտի եկամտահարկից նվազեցումը՝ 10-րդ (Շահաբաժիններ), 11-րդ (Տոկոսներ) և 12-րդ (Ռոյալթի) հոդվածների դրույթներին համապատասխան: Սակայն այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման իրականացումը հաշվարկված շվեյցարական հարկի այն մասը, որը նախատեսված է Հայաստանում հարկման ենթակա եկամտի համար, կամ

ii) շվեյցարական հարկի ընդհանուր գումարի նվազեցումը, կամ

iii) շվեյցարական հարկից նման շահաբաժինների, տոկոսների կամ ռոյալթիի մասնակի ազատում. ամեն դեպքում ընդգրկում է Հայաստանում գանձվող հարկի նվազեցումը շահաբաժինների, տոկոսների կամ ռոյալթիի համախառն գումարից:

Շվեյցարիան կարող է սահմանել կիրառելի ազատումը և կարգավորել ընթացակարգը՝ Շվեյցարիայի պայմաններին համապատասխան, կապված կրկնակի հարկման բացառման վերաբերյալ Շվեյցարիայի Համադաշնության միջազգային կոնվենցիաների կիրառման հետ:

գ) Շվեյցարիայի ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը, և որը շահաբաժիններ է ստանում Հայաստանի ռեզիդենտ հանդիսացող ընկերությունից, շվեյցարական հարկի նպատակների համար այդպիսի շահաբաժինների առնչությամբ, ենթակա է նույն ազատմանը, որը կտրվեր ընկերությանը, եթե շահաբաժիններ վճարող ընկերությունը լիներ Շվեյցարիայի ռեզիդենտ:

## **Հոդված 24** **Անխտրականություն**

1. Պայմանավորվող պետության ազգային անձինք մյուս Պայմանավորվող պետությունում չեն ենթարկվի այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք նույն հանգամանքների դեպքում, մասնավորապես՝ ռեզիդենտության նկատմամբ: Այս դրույթը, չնայած 1-ին հոդվածի (Ընդգրկված անձինք) դրույթներին, կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է լինի նվազ բարենպաստ, քան այդ մյուս Պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկությունների հարկումը: Այս դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին հարկման նպատակներով այնպիսի անձնական զեղչեր, ազատումներ և նվազեցումներ տրամադրել, որոնք Պայմանավորվող պետությունը տրամադրում է իր ռեզիդենտներին նրանց քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա:

3. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի (Ասոցիացված ձեռնարկություններ), 11-րդ հոդվածի (Տոկոսներ) 7-րդ կետի կամ 12-րդ հոդվածի (Ռոյալթի) 6-րդ կետի դրույթների՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարած տոկոսները, ռոյալթին և այլ վարձատրությունները այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչպես առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես, Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտքը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին այդ ձեռնարկության հարկվող կապիտալի որոշման նպատակով ենթակա է նվազեցման նույն պայմաններով, ինչպես առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին պարտք լինելիս:

4. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում կամ կառավարվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, առաջինը հիշատակված Պետությունում չեն ենթարկվի այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջինը հիշատակված Պետության այլ համանման ձեռնարկությունները:

5. Չնայած 2-րդ հոդվածի (Ընդգրկված հարկերը) դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կիրառվում են բոլոր տեսակի և բնույթի հարկերի նկատմամբ:

## **Հոդված 25** **Փոխհամաձայնեցման ընթացակարգ**

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման, ապա նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ, եթե իր գործը վերաբերում է 24-րդ հոդվածի (Անխտրականություն) 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի երեք տարվա ընթացքում՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից:

2. Եթե իրավասու մարմինը դիմում-բողոքը համարում է արդարացի, և եթե նա ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա ձգտում է գործը վճռել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ կասկած ձգտում են լուծել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են նաև խորհրդակցել միմյանց հետ Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու վերաբերյալ:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ, ներառյալ՝ իրենցից կամ իրենց ներկայացուցիչներից կազմված համատեղ հանձնաժողովի միջոցով, նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով:

## **Հոդված 26** **Տեղեկատվության փոխանակում**

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կփոխանակեն այնպիսի տեղեկություններ (նորմալ ղեկավարման ընթացքում, իրենց համապատասխան հարկային օրենքներին համաձայն, իրենց տրամադրության տակ ունեցած տեղեկություն), որոնք անհրաժեշտ կլինեն սույն Կոնվենցիայի դրույթների իրականացման համար: Նման ձևով փոխանակված ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի և չի կարող հաղորդվել որևէ անձի, որը չի զբաղվում Կոնվենցիայի առարկա հանդիսացող հարկերի գնահատմամբ և գանձմամբ: Չի կարող փոխանակվել վերը հիշատակված ոչ մի տեղեկություն, որը կբացահայտի որևէ առևտրային, ձեռնարկատիրական, բանկային, արդյունաբերական կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրային գործընթաց:

2. Սույն հոդվածի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես որևէ Պայմանավորվող պետության պարտավորեցնող՝ իրականացնել յուրաքանչյուր Պայմանավորվող պետության կարգավորումներին կամ պրակտիկային հակասող վարչական միջոցառումներ, կամ որոնք հակասում են Պետության ինքնիշխանությանը, անվտանգությանը կամ պետական քաղաքականությանը (հասարակական կարգին), կամ տրամադրել մանրամասն տվյալներ, որոնք մատչելի չեն իր օրենքների կամ դրանք կիրառող Պետության օրենքների համաձայն:

## **Հոդված 27** **Դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական հիմնարկների անդամներ**

1. Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական առաքելությունների կամ հյուպատոսական հիմնարկների անդամների միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնությունների վրա:

2. Չնայած 4-րդ հոդվածի (Ռեզիդենտ) դրույթներին՝ անհատը, որը հանդիսանում է Պայմանավորվող պետության դիվանագիտական առաքելության, հյուպատոսական հիմնարկի կամ մշտական առաքելության անդամ, որը տեղակայված է մյուս Պայմանավորվող պետությունում կամ երրորդ Պետությունում, սույն Կոնվենցիայի նպատակներով կհամարվի ուղարկող Պետության ռեզիդենտ, եթե.

ա) միջազգային իրավունքին համապատասխան՝ նա ենթակա չէ հարկման ընդունող Պայմանավորվող պետությունում այդ Պետության տարածքից դուրս գտնվող աղբյուրներից եկամտի կամ այդ Պետության տարածքից դուրս տեղակայված գույքի առնչությամբ, և

բ) այդ անհատը ուղարկող Պետությունում ենթարկվում է միևնույն պարտավորություններին՝ կապված իր ընդհանուր եկամտի կամ կապիտալի հարկման հետ, ինչպես այդ Պետության ռեզիդենտները:

3. Կոնվենցիան չի կիրառվի միջազգային կազմակերպությունների, դրանց մարմինների կամ ծառայողների և երրորդ Պետության դիվանագիտական առաքելության, հյուպատոսական հիմնարկի կամ մշտական առաքելության անդամներ հանդիսացող անձանց նկատմամբ, որոնք ներկա են գտնվում Պայմանավորվող պետությունում և Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում եկամտի կամ գույքի հարկերի առնչությամբ չեն դիտարկվում որպես ռեզիդենտներ:

### **Հոդված 28 Ուժի մեջ մտնելը**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն դիվանագիտական ուղիներով կժամուցի մյուսին սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու համար իր օրենսդրությամբ պահանջվող ընթացակարգերի ավարտի մասին: Կոնվենցիան ուժի մեջ կմտնի այդ ծանուցումներից վերջինը ստանալու օրվանից:

2. Կոնվենցիայի դրույթները կգործեն.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարված կամ ավանդագրված գումարների նկատմամբ,

բ) այլ հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող հարկային տարիների համար:

### **Հոդված 29 Ղադարեցումը**

Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմնա մինչև Պայմանավորվող պետության կողմից դրա գործողության ղադարեցումը: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է ղադարեցնել Կոնվենցիան՝ դիվանագիտական ուղիներով ղադարեցման մասին ծանուցում ուղարկելով ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ: Այդ դեպքում Կոնվենցիան կղադարեցնի իր գործողությունը.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցումը ուղարկելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարված կամ ավանդագրված գումարների նկատմամբ,

բ) այլ հարկերի առնչությամբ՝ ծանուցումը ուղարկելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող հարկային տարիների համար:

**Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝** համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարվել է Երևանում 2006 թվականի հունիսի 12-ին, երկու բնօրինակով, հայերեն, գերմաներեն և անգլերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Հայերեն և գերմաներեն տեքստերի մեկնաբանման ժամանակ ցանկացած տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

## Ա Ր Չ Ա Ն Ա Ք Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետությունը և Շվեյցարիայի Համադաշնությունը 2006 թվականի հունիսի 12-ին Երևանում երկու պետությունների միջև Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին Կոնվենցիան ստորագրելու պահին համաձայնեցին հետևյալ դրույթների վերաբերյալ, որոնք կազմում են նշված Կոնվենցիայի անբաժանելի մասը:

1. 7-րդ հոդվածի առնչությամբ.

7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) 1-ին և 2-րդ կետերի հետ կապված, երբ Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ապրանքներ կամ արտադրանք է վաճառում կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պետությունում այնտեղ տեղակայված մշտական հաստատության միջոցով, այդ մշտական հաստատության շահույթը չի կարող որոշվել ձեռնարկության ստացած ամբողջ գումարի հիման վրա, այլ կարող է որոշվել միայն ընդհանուր եկամտի այն մասի հիման վրա, որը վերագրվում է մշտական հաստատության իրական գործունեությանը այդպիսի վաճառքի կամ ձեռնարկատիրական գործունեության համար:

Չնման, մատակարարման, արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների կամ շինությունների տեղակայման կամ կառուցման կամ հասարակական աշխատանքների իրականացման համար պայմանագրերի դեպքում, երբ ձեռնարկությունն ունի մշտական հաստատություն, ապա այդպիսի մշտական հաստատության շահույթը չի կարող որոշվել պայմանագրի ընդհանուր գումարի հիման վրա, այլ կարող է որոշվել միայն պայմանագրի այն մասի հիման վրա, որն արդյունավետ կերպով իրականացվում է մշտական հաստատության կողմից այն Պետությունում, որտեղ տեղակայված է այդ մշտական հաստատությունը:

Պայմանագրի այն մասի հետ կապված շահույթը, որն իրականացվում է ձեռնարկության գլխավոր գրասենյակի կողմից, ենթակա է հարկման միայն այն Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում ձեռնարկությունը:

2. 18-րդ և 19-րդ հոդվածների առնչությամբ.

Պայմանավորված է, որ «կենսաթոշակներ» և «կենսաթոշակ» տերմինները, ինչպես օգտագործվում են 18-րդ (Կենսաթոշակներ) և 19-րդ (Պետական ծառայություն) հոդվածներում, համապատասխանաբար, ընդգրկում են ոչ միայն պարբերաբար իրականացվող վճարումները, այլ նաև վճարումների ընդհանուր գումարը:

Կատարվել է Երևանում 2006 թվականի հունիսի 12-ին, երկու բնօրինակով, հայերեն, գերմաներեն և անգլերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Հայերեն և գերմաներեն տեքստերի մեկնաբանման ժամանակ ցանկացած տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

***Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2007թ. նոյեմբերի 7-ից :***